



**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ԶԱՄԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԿԱՄՕ ԱՄԱԳՈՒՄԵԱՆ
ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ**

Մեծարգոյ պրն. Ասագումեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն
ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ զաւակիդ:

Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ քաջամասօք ենք ազգօգուտ եւ եկեղեցանուէր
Ձեր ծառայութեանը: Դուք փարիներ շարունակ նախանձախնդիր ոգով աջակցում էք
Ռուսաւարանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաքելութեանը՝ արժանանալով թեմակալ
Առաջնորդի եւ հոգեւոր դասի անկեղծ յարգանքին ու գնահատանքին:

Ռուսահայոց ազգային ու հոգեւոր կեանքը առաւել կազմակերպուած, շէն ու պայծառ
դարձնելու փնտիլքով Դուք մասնակցութիւն բերեցիք նաեւ փիրախնամ թեմի առաջնորդանիստը
եկեղեցու եւ կից համալիրի կառուցման նուիրական գործին: Ձեր աստուածահաճոյ
յանձնառութիւններով բարեգործ հայորդիներդ փառաւոր նոր էջ յաւելցիք ռուսահայ
համայնքի պատմութեանը՝ եկեղեցասիրութեան պայծառ օրինակ մատուցելով յերազայ
սերունդներին:

Ուրախ ենք նաեւ անդրադառնալու Արցախին բերած Ձեր զօրակցութեանը, որն
արգասիքն է Ձեր հոգու անկեղծ սիրոյ ու նուիրումի՝ հանդէպ հայրենի մեր երկիրն ու
հարազատ ժողովուրդը: Գոհունակութեամբ փառք ենք մատուցում Բարձրեալին, որ ազգս
հայոց օրհնել է Ձեզ պէս հաւատարմոր, ազգասէր զաւակներով:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած օգուտաւոր ծառայութիւնները մեր ժողովրդին
ու Եկեղեցուն, սիրով ընդառաջ թեմակալ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս
Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ
Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Հայրապետիս աղօթքն է, որ Բարձրեալ Տէրը հաճապազ զօրավիզ ու աջակից լինի

Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգևելով քաջատողջ կենաց բազում օրեր եւ գործոց մշտանորոգ յաջողություններ:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեւսն. ամէն:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ,
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 767